

Բանալի բառեր՝ բարեկեցություն, բարեկեցության պետական կարգավորում, բարեկեցության մոդել, սոցիալական բաղաբանություն, սոցիալական պետություն, համընդհանուր բարեկեցության պետություն:

ՀՏԴ 338(479.25)

ԲԱՐԵԿԵՑՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄԸ

Ռուզաննա ԱՐՄԵՆԱԿՅԱՆ

Տնտեսագիտության թեկնածու, ՀՊՏՀ դոցենտ

Բարեկեցությունը որպես սոցիալ-տնտեսական կատեգորիա, բնութագրում է մարդկանց կենսապահովվածության վիճակը, միաժամանակ հանդես գալով որպես առանձին մարդկանց ու հասարակության կենսապահովման չափանիշ: Բարեկեցության կարգավորումը նշանակում է դրա ապահովման տարրերի, երաշխիքների և այլնի փոփոխություն:

Բնակչության բարեկեցության ձևավորման պայմանների պետական կարգավորումը ժամանակակից տնտեսության գլխավոր խնդիրներից մեկն է: Եթե բարեկեցության կարգավորման շուկայական մեխանիզմը կրում է տարերային բնույթ, ապա պետական կարգավորումն ունի նպատակաուղղված բնույթ, այն ձևավորում է մարդու բարեկեցությունը և ուղղակիորեն ազդում նրա կենսագործունեության տարբեր պայմանների վրա: Պետական կարգավորման նման մոդելը բարացած չէ, այն փոփոխվում է հասարակության պահանջմունքների կառուցվածքի փոփոխության, երկրում բաղաբանական ուժերի վերադասավորումների հետ միասին:

Բարեկեցության ձեռքբերման գործում պետության դերի մասին տնտեսագիտության մեջ գիտնականները միակարծիք չեն, նրանց կողմից առաջ են քաշվել մի շարք հայեցակարգեր: Ըստ բարեկեցության վերարտադրության գործընթացի վրա պետական ազդեցության ուժեղացման աստիճանի՝ մոդելները կարելի է ներկայացնել տարբեր կերպ՝ պետության-նվազագույնից մինչև «համընդհանուր բարեկեցության» պետություն:

Բարեկեցության մոդելը կարելի է բնորոշել որպես շուկայի ու պետության օգնությամբ (տնտեսական օրենքների հիման վրա) հասարակության մեջ առկա հակասությունների լուծման հատուկ ձև, որի նպատակն է հասարակական բարեկեցության բարձրացումը: Մոդելների սահմանազատման չափանիշ է անհատական ու հասարակական բարեկեցության ապահովման գործում պետության ու շուկայի միջև հարաբերակցությունը:

Բարեկեցության մոդելի հիմքը ձևավորող օրենքներից է ամենից առաջ ծախսերի համեմատ արդյունքների (օգուտների) գերազանցման օրենքը և այնուհետև, պահանջմունքների անընդհատ բարձրացման օրենքը: Առաջին օրենքը հնարավոր է դարձնում հասարակական բարեկեցության աճը: Եթե ռեսուրսների ծախսերը համընկնեին ստացված արդյունքների հետ, ապա նյութական միջոցները բավարար չէին լինի սոցիալ-տնտեսական առաջընթացի զարգացման համար, իսկ պահանջմունքների անընդհատ աճի օրենքը ենթադրում է բարձրացնել հասարակական բարեկեցության մակարդակը:

Միջազգային պրակտիկայում հայտնի են բարեկեցության վրա պետական ազդեցության բազմաթիվ մոդելներ: Այժմ քննարկենք գոյություն ունեցող դասակարգումներից մեկը.

1. պետության-նվազագույնի ազատական (լիբերալ) մոդել, որի շրջանակներում պետությունը չպետք է միջամտի շուկայի կողմից հասարակական բարեկեցության ձևավորման գործընթացին՝ սահմանափակվելով միայն շուկայի գործունեության համար իրավական պայմաններ ստեղծելով,

2. նորդասական մոդել, որը ազատականի համեմատ ընդլայնում է պետության գործառնությունը: Նորդասական մոդելը ենթադրում է պետության կողմից հասարակական բարիքների արտադրություն, եկամուտների վերաբաշխում,

3. նորթեյնսյան «բարեկեցության պետության» մոդել, որը նախատեսում է շուկայի գործունեության մեջ ավելի շատ միջամտություն, որի նպատակն է բնակչության բարեկեցության բարձրացումը,

4. սոցիալական շուկայական տնտեսության մոդել, որտեղ պետության դերը ավելի մեծ է, քան ազատական մոդելում, բայց ավելի փոքր՝ քան նորթեյնսյան մոդելում:

Բնակչության բարեկեցության պետական կարգավորման գլխավոր օբյեկտներ են մարդու ֆիզիկական ուժերի վերարտադրության պայմանները (նրա պահպանումը որպես բիոլոգիական էակ) և նրա սոցիալիզացիայի պայմանները (նրա պահպանումը որպես անհատ): Որպես կանոն, պետական կարգավորումն ուղղված է բարեկեցության ձևավորման արտաքին ոչ թե մեկ, այլ բազմաթիվ պայմանների փոփոխությանը:

Կարգավորման օբյեկտների հստակ որոշումը թույլ կտա՝

- համակողմանիորեն ազդել սեփական պահանջմունքները բավարարելու մարդկանց հնարավորությունների վրա: Այս դեպքում որպես կարգավորման օբյեկտ հանդես կգան բնակչության եկամուտները՝ աշխատավարձը, սեփականությունից և ձեռնարկատիրական գործունեությունից ստացվող եկամուտները, սոցիալական տրանսֆերտները, արժեթղթերից ստացվող եկամուտները, ավանդներից ստացվող տոկոսները, անշարժ գույքի իրացումից ստացվող եկամուտները:

- Կարգավորել բնակչության համար բարիքների առկայությունն ու մատչելիությունը: Այս դեպքում կարգավորման օբյեկտ կդառնան ապրանքների ու ծառայությունների գների մակարդակը, բարիքներ արտադրող տարբեր ճյուղերում արտադրության ծավալը:

Բարեկեցության վերարտադրության գործընթացի կայունության տեսանկյունից հասարակական բարեկեցության պետական կարգավորման կարևոր օբյեկտներ են հանդիսանում նաև աշխատանքային ու ձեռնարկատիրական գործունեության պայմանները (բնակչության զբաղվածությունը) և մարդու վերարտադրությունն ապահովող սոցիալական միջավայրի վիճակը, ինչպես նաև շրջակա միջավայրը, որն ապահովում է բնության մեջ մարդու վերարտադրությունը:

Բնակչության բարեկեցության ձևավորման պայմանների կարգավորման շրջանակները կախված են այն ռեսուրսներից, որոնք տվյալ պահին պետությունն ունի իր տրամադրության տակ: Այդ ռեսուրսներից են՝

- պետության ֆինանսները (պետբյուջեն և արտաբյուջետային ֆոնդերը),
- տնտեսության պետական հատվածը (առաջին հերթին հասարակական բարիք արտադրող ձեռնարկությունները),
- օրենսդրական իրավունքը,
- բարեկեցության ձեռք բերած մակարդակի մասին տեղեկատվության մշտական հավաքման ու մշակման հնարավորությունը (բնակչության բարեկեցության մոնիթորինգ):

Կախված տրամադրության տակ ունեցած ռեսուրսներից, ինչպես նաև իր առջև դրած նպատակներից ու խնդիրներից, պետությունը կարող է կիրառել բնակչության բարեկեցության վերարտադրության վրա ազդելու տարբեր ձևեր, այդ կոնկրետ ձևերն ու մեթոդներն էլ հենց հանդես են գալիս որպես սոցիալ-տնտեսական գործընթացների վրա ազդող գործիքներ:

Բարեկեցության պետական կարգավորման հիմնական ձևերը դրսևորվում են 2 ուղղություններում.

1. բարեկեցության ձևավորման շուկայական մեխանիզմի աջակցման ու զարգացման համար պայմանների ստեղծում: Այս դեպքում պետական ծառայությունները կրում են իրավական բնույթ, դրանք են որոշում «խաղի կանոնները», բարեկեցության ձևավորման շուկայական մեխանիզմի գործունեության «շրջանակները», սրանք անհրաժեշտ են բարեկեցության վրա շուկայի սոցիալական ազդեցությունն ուժեղացնելու համար: Շուկայական գործընթացը կարգավորող օրենքներից են՝ «Սպառողների իրավունքների պաշտպանության մասին» ՀՀ օրենքը, «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» ՀՀ օրենքը և այլ օրենքներ:

2. Շուկայական մեխանիզմի ճշգրտում, ձևավորում ու կատարելագործում՝ զարգացման պայմանների, հասարակական նորմերի ու արժեքների փոփոխությանը համապատասխան: Սրանք ուղղված են շուկայի թերությունների վերացմանը և նրա արդյունքների մոտեցմանը սոցիալական արդարության չափանիշներին համապատասխանող հասարակական օպտիմումին: Տվյալ դեպքում կարելի է առանձնացնել պետական ազդեցության հետևյալ հիմնական ուղղությունները.

• Պետական ձեռնարկություն և հասարակական արտադրություն, երբ պետությունը հանդես է գալիս կամ որպես բարիքի անմիջական արտադրող, կամ էլ պետությունը մասնավոր հատվածում պայմանագրային հիմունքներով համապատասխան պատվերներ է իջեցնում: Այս կազմակերպական ձևի շրջանակներում բնակչության բարեկեցության վրա էական ազդեցություն է թողնում հասարակական բարիքների ու ծառայությունների արտադրությունն ու իրացումը (կրթություն, բժշկական ծառայություն, արվեստ ու մշակույթ, պարտադիր պետական ապահովագրություն և այլն)՝ կապված բնակչության բոլոր շերտերի համար այդ բարիքների մատչելիությունն ապահովելու ու բոլոր քաղաքացիների համար ելակետային միատեսակ պայմաններ ստեղծելու հետ:

• Եկամուտների ու հարստության (բյուջետա-ֆինանսական ձևը) վերաբաշխում, որը ճշգրտում է բարեկեցության ձևավորման շուկայական մեխանիզմի արդյունքները՝ արդարության մասին հասարակական պատկերացումներին համապատասխան: Մի կողմից տեղի է ունենում «ըստ եկամուտների մակարդակի» բնակչության չափից ավելի տարբերակման մեղմացում, մյուս կողմից էլ՝ կենսաթոշակային ապահովման, կրթության, առողջապահության սոցիալական ծրագրերի ֆինանսավորում:

• Դրամաշրջանառության և դրամի գանգվածի ծավալի կարգավորում: Մի կողմից պետությունը ազդում է բարեկեցության վրա՝ ապահովելով մատչելի վարկեր, մյուս կողմից էլ վերահսկելով ինֆլյացիոն գործընթացները՝ նպատակ է դնում ապահովել բնակչության մեծ մասի համար ընդունելի կյանքի արժեքը:

Կարելի է ասել, որ պետության տնտեսական քաղաքականության բոլոր տարրերն ունեն արտահայտված սոցիալական կողմնորոշում, իսկ որպես բարեկեցության պետական կարգավորման կենտրոնական օղակ հանդես է գալիս սոցիալական քաղաքականությունը:

Սոցիալական քաղաքականությունը բարդ կառուցվածքային կազմավորում է, որում առանձնացվում են հետևյալ հիմնական ուղղությունները.

- բնակչության եկամուտների բաշխման ու վերաբաշխման քաղաքականություն,
- ժողովրդագրական և բնակչության առանձին խմբերի սոցիալական պաշտպանության քաղաքականություն (երիտասարդներին, մեծահասակներին, միայնակներին և այլն),
- սոցիալական ոլորտի ճյուղերի զարգացում և Էկոլոգիա,
- զբաղվածության և աշխատանքային հարաբերությունների ոլորտում քաղաքականություն,
- միգրացիոն քաղաքականություն:

Ըստ բովանդակության և ներքին կառուցվածքի սոցիալական քաղաքականությունը ամբողջական, միասնական համակարգ է, որի բոլոր բաղկացուցիչ մասերը փոխադարձորեն կապված են ու միմյանցից կախված:

Չարգացած բազմաթիվ երկրներում սոցիալական քաղաքականությունը դարձել է բնակչության բարեկեցության պետական կարգավորման գործընթացի անբաժան մասը: Նման մասնակցությունը բացատրվում է «համընդհանուր բարեկեցության պետության» կամ «սոցիալական պետության» ձևավորմամբ:

Տնտեսագիտական գրականության մեջ բազմաթիվ տնտեսագետներ «համընդհանուր բարեկեցության պետությունը» բնութագրում են ելնելով արդարացի բաշխման և հասարակության յուրաքանչյուր անդամի բարեկեցության ապահովման տեսանկյունից, իսկ «սոցիալական պետությունը» դիտարկում են որպես իրավական դեմոկրատական պետություն, որն իրականացնում է ուժեղ սոցիալական քաղաքականություն և զարգացնում է սոցիալական շուկայական տնտեսությունը, որի նպատակն է բնակչության կայուն բարձր կենսամակարդակի ապահովումը, քաղաքացիների իրավունքների ու ազատությունների իրականացումը, բոլոր քաղաքացիների համար կրթության, առողջապահության, մշակույթի, սոցիալական ապահովության ու սպասարկման ժամանակակից և մատչելի համակարգի ստեղծումը, բնակչության քիչ ապահով ու աղքատ խավերին աջակցելը:

Բնակչության սոցիալական ապահովությունը պետք է ձեռք բերվի պետության և անհատի երկկողմանի համագործակցության միջոցով, պետությունը պետք է կազմակերպի ապահովությունը, որի ֆինանսավորումը պետք է իրականացվի հիմնականում բնակչության վճարումների հաշվին: Ժամանակի պահանջն է սոցիալական արդյունավետ քաղաքականության իրականացումը: Պետության վարած սոցիալական քաղաքականությունը պետք է լինի ճկուն, թուլացնի սոցիալական լարվածությունը, միաժամանակ չպետք է առաջացնի պետության նպաստներով ապրող մարդկանց հատուկ խավ: Այն չպետք է խանգարի ձեռներեցության զարգացմանը, չպետք է իջեցնի արտադրության արդյունավետությունը՝ միաժամանակ բարձրացնելով մարդկանց բարեկեցությունը:

Ներկայացվել է 08.02.2018թ.
Ընդունվել է տպագրության 28.02.2018թ.